§5.5. ՍԼԱՅԴՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

PowerPoint-ում ստեղծվող ցուցադրումը կարող է բարձրորակ լինել, եթե օգտվենք *ձևավորման ստանդարտ թեմաներից*: Վերջիններս ձևավորման պարամետրերի հավաքածուներ են, որոնց միջոցով կարելի է սահմանել սլայդի էջի չափերը, ընտրել անհրաժեշտ գույները, վերնագրի և հիմնական տեքստի տառատեսակը, ֆոնի նկարը, օբյեկտները եզրագծելու և փակ տիրույթները լցնելու ձևերը և այլն: Հիմնականում այս ամենը կարելի է իրականացնել *Design* ներդիրի օգնությամբ (նկ. 5.17.):



Նկ. 5.17. Design ներդիր

Էջի պարամետրերը սահմանելու համար անհրաժեշտ է.

- ընտրել *Design* ներդիրի *Page Setup* խմբի (*Page Setup*) կոճակը,
- բերված *Page Setup* պատուհանի (նկ. 5.18.) *Slides sized for* դաշտում ընտրել սլայդների տպագրման համար նախատեսված թղթի *A3, A4, ...* չափերից որևէ մեկը (ցուցադրումը մոնիտորի վրա ներկայացնելու դեպքում ընտրել *4:3, 16:9, 16:10* հարաբերություններից որևէ մեկը):



Նկ. 5.18. Page Setup պատուհան

Անհրաժեշտության դեպքում *Width* և *Height* դաշտերում կարելի է սլայդի լայնության և բարձրության համար այլ չափեր սահմանել:

Սլայդը պատկերելու տեսքը սահմանելու համար անհրաժեշտ է.

⇨ ընտրել *Design* ներդիրի *Page Setup* խմբի (*Slide Orientation*) կոճակը,

⇨ բերված պատուհանից ընտրել (*Portrait*) – երկայնակի կամ (*Landscape*) – լայնակի տարբերակներից անհրաժեշտը:

Design ներդիրի *Themes* խմբում ձևավորման մի շարք *թեմաներ* են ներառված: Մինչև *ձևավորման թեմա* ընտրելը *PowerPoint*-ն առաջարկում է դիտել առկա թեմաները. ընդ որում՝ մկնիկի ցուցիչը որևէ թեմայի վրա տեղադրելիս ակտիվ սլայդը վերաձևավորվում է դրան համապատասխան ձևով: Թեմաները ներառող պատուհանը կարելի է բացել դրանց աջից կից սլաքով:

Ցուցադրման վրա որևէ ստանդարտ թեմա կիրառելու համար անհրաժեշտ է.

⇨ ընտրել *Design* ներդիրի *Themes* խմբում առաջարկվող թեմաներից անհրաժեշտը:

Ձևավորման թեման կարելի է կիրառել ինչպես բոլոր սլայդների, այնպես էլ միայն նշված սլայդների համար: Միայն *նշված սլայդների վրա կիրառելու համար անհրաժեշտ է* մկնիկի ցուցիչը տեղադրել անհրաժեշտ թեմայի տարբերանշանի վրա, սեղմել աջ սեղմակն ու բերված պատուհանից ընտրել *Apply to Selected Slides* տարբերակը, իսկ բոլոր սլայդների վրա կիրառելու համար՝ *Apply to All Slides* տարբերակը:

Ձևավորման յուրաքանչյուր թեմա *գույների* որոշակի *հավաքածու է* պարունակում՝ տեքստի ներկայացման *2* գույն, ֆոնի համար *2* գույն, օբյեկտները նշելու *6* գույն և հիպերհղումների *2* գույն:

Ձևավորման թեմայի գույների հավաքածուն փոխելու համար անհրաժեշտ է.

⇨ ընտրել *Design* ներդիրի *Themes* խմբի (*Colors*) կոճակը,

⇨ բերված պատուհանում (նկ. 5.19.) առաջարկվող հավաքածուներից ընտրել անհրաժեշտը:

Ձևավորման գույների հավաքածուն նշված սլայդների վրա կիրառելու համար պետք է մկնիկի ցուցիչը տեղադրել անհրաժեշտ հավաքածուի վրա, սեղմել աջ սեղմակն ու բերված պատուհանից ընտրել *Apply to Selected Slides,* իսկ բոլոր սլայդների վրա կիրառելու համար՝ *Apply to All Slides* տարբերակը: Այս նպատակով կարելի է նաև մկնիկի ձախ սեղմակով ընտրել հավաքածուի անվանումը:

Ձևավորման յուրաքանչյուր թեմայի համար կարելի է ընտրել ինչպես *վերնագրի*, այնպես էլ *հիմնական տեքստի տառատեսակը*:

Ձևավորման թեմայի տառատեսակներն ընտրելու համար անհրաժեշտ է.

⇨ ընտրել *Design* ներդիրի *Themes* խմբի (*Fonts*) կոճակը,

⇨ բերված պատուհանից (նկ. 5.20.) ընտրել անհրաժեշտ տառատեսակների հավաքածուն:



Նկ. 5.19. Ձևավորման թեմայի գույների ընտրություն



Նկ. 5.20. Ձևավորման թեմայի տառատեսակների ընտրություն



Նկ. 5.21. Ձևավորման թեմայի էֆեկտների ընտրություն

Ձևավորման թեմայի տառատեսակների յուրաքանչյուր հավաքածուի առաջին տողի գրառումը հավաքածուի անվանումն է, երկրորդը՝ վերնագրի համար նախատեսված տառատեսակի անվանումը, երրորդը՝ հիմնական տեքստի տառատեսակի անվանումը: *Տառատեսակների սեփական հավաքածու* կազմելու համար անհրաժեշտ է ձևավորման թեմայի հնարավոր տառատեսակների պատուհանից (նկ. 5.20.) ընտրել վերջին տողի *Create New Theme Fonts* գրառումը, ապա բերված պատուհանի (նկ. 5.22.) *Heading font* դաշտում վերնագրի տառատեսակը, *Body font* դաշտում՝ հիմնական տեքստի տառատեսակը, իսկ *Name* դաշտում ներմուծել ստեղծված հավաքածուի անվանումը: Վերջում անհրաժեշտ է կատարված ընտրությունը *Save* կոճակով պահպանել:

Յուրաքանչյուր թեմայի համար ֆոնի որոշակի ոճերի հավաքածու է նախատեսված: *Սլայդի ֆոնն ընտրելու* համար անհրաժեշտ է.

⇨ ընտրել *Design* ներդիրի *Background* խմբի (*Background Styles*) կոճակը,

⇨ բերված պատուհանում (նկ. 5.23.) ընտրել ֆոնի ցանկալի տարբերակը:

Այստեղ ևս, օգտվելով մկնիկի աջ սեղմակով բացվող պատուհանից, ընտրված ֆոնը կարելի է կիրառել ինչպես բոլոր, այնպես էլ միայն նշված սլայդների համար:

Նկ. 5.22. Տառատեսակների սեփական հավաքածու ստեղծելու պատուհան



Նկ. 5.23. Ֆոն ընտրելու պատուհան

Օգտակար է իմանալ

- Ձևավորման թեմային էֆեկտներ տալու համար անհրաժեշտ է ընտրել *Design* ներդիրի *Themes* խմբի (*Effects*) կոճակն ու բերված պատուհանից (նկ. 5.21.) ընտրել անհրաժեշտ տարբերակը:
- Սլայդի ֆոնում նկար տեղադրելու համար անհրաժեշտ է *Design* ներդիրի *Background* խմբի ստորին աջ անկյունում տեղակայված կոճակով բացվող *Format Background* պատուհանում նախ ընտրել *File* կոճակը, ապա անհրաժեշտ նկարն ու սեղմել *Insert* կոճակը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է ձևավորման ստանդարտ թեման:
2. Ձևավորման թեմայի գույների հավաքածուն սլայդի ո՞ր բաղադրիչների համար է գույներ ներառում:
3. Կարելի՞ է ձևավորման թեմայի գույների հավաքածուն տարածել միայն ընտրված սլայդների վրա:
4. Ձևավորման թեմայում ո՞ր օբյեկտների տառատեսակն է կարելի սահմանել:

Լաբորատոր աշխատանք 11

Սլայդների ձևավորում

1. *Start, All Programs, Microsoft Office, Microsoft Office PowerPoint 2007* հաջորդական քայլերի միջոցով *MS PowerPoint* ծրագրի միջավայր մտեք:
2. *Office* կոճակով բացվող մենյուի (*Open*)-ով բերվող պատուհանում ընտրեք նախորդ լաբորատոր աշխատանքի ընթացքում ձեր ստեղծած և պահպանած ցուցադրումը:
3. Ընտրեք *Design* ներդիրի *Page Setup* խմբի (*Page Setup*) կոճակն ու բերված *Page Setup* պատուհանի *Slides sized for* դաշտում ընտրեք թղթի *A4* չափը:
4. *Design* ներդիրի *Page Setup* խմբի (*Slide Orientation*) կոճակով բացվող պատուհանից ընտրեք սլայդների ներկայացման (*Portrait*) երկայնակի տեսքը:
5. *Design* ներդիրի *Themes* խմբում առաջարկվող թեմաներից ընտրեք մի քանիսն ու դրանցից յուրաքանչյուրի դեպքում հետևեք սլայդների ձևավորումներին:
6. Ձևավորման որևէ թեմա ընտրեք և այն բոլոր սլայդների վրա կիրառելու համար տվյալ թեմայի տարբերանշանի վրա մկնիկի աջ սեղմակով բերված պատուհանից ընտրեք *Apply to All Slides* տարբերակը:
7. *Ctrl* ստեղնը սեղմած վիճակում նշեք երկրորդ և երրորդ սլայդներն ու *Design* ներդիրի *Themes* խմբի (*Colors*) կոճակով բացված պատուհանում մկնիկի աջ սեղմակով ընտրեք ներառված հավաքածուներից որևէ մեկը: Բերված պատուհանում ընտրեք *Apply to Selected Slides* տարբերակը:
8. Ընտրեք առաջին սլայդն ու դրա համար *Design* ներդիրի *Background* խմբի (*Background Styles*) կոճակով բերված պատուհանից ֆոնի որևէ տարբերակ կիրառեք:
9. Ձևավորված ցուցադրումը դիտելու համար ընտրեք սլայդների դիտման ռեժիմների ղեկավարման (*Slide Show*) կոճակը: